ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ. Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պայքարը մարդու համար, որ մղել և մղում են կոմունիստները, երբեք չի նամանատիկվում մարդու միայն նյութական պահանջմունքների լիակատար բավարարումով։ Կոմունիզմի նպատակը ինքը մարդն է, նրա բազմակողմանի զարգացումը և բազմապիսի պահանջմունքների բավարարումը։ Ըստ որում, կոմունիստների համար յուրաքանչյուր անհատի հոգևոր կատարելագործումը պակաս կարևոր չէ, քան, ասենք, նրա այլ պահանջմունքների ու կարիքների բավարարումը։ Ահա թե ինչու Կոմունիստական պարտիան իր առաջնահերթ խնդիրն է համարում նաև նոր մարդու դաստիարակությունը, որն իր մեջ ներդաշնակորեն զուգորդում է հոգևոր հարստությունը, բարոյական մաքրությունն ու ֆիզիկական կատարելությունը[1]։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում մեծապես աճել են մեր հնարավորությունները և օրվա խնդիր է դարձել նոր, կոմունիստական ժամանակաշրջանի մարդու դաստիարակությունը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ կոմունիստական հասարակություն չի կարելի մուտք գործել մասնավոր-սեփականատիրական բարոյականության վերապրուկների ծանր բեռով, այլև այն պատճառով, որ կոմունիզմին անցնելու պրոցեսն ինքը ենթադրում է նոր մարդու մասնակցություն, որը ստեղծում է կոմունիզմի նյութատեխնիկական բազա և հասարակական նոր հարաբերություններ։ Չէ՞ որ այն ամենը, ինչ կատարվում է մեր երկրում, ոչ թե գերբնական ուժերի, այլ սովետական մարդու՝ մեր ժամանակակցի ձեռքի ու մտքի արգասիքն է։

Շինարար լինելու այդ հատկանիշով են պայմանավորված սովետական մարդու ոչ միայն արտադրական կարողությունն ու հմտությունը, այլև, որ պակաս կարևոր չէ, նրա հոգևոր դիմանկարը, նրա բարոյական սկզբունքները։ Այն բանից, թե ինչ վարքագիծ կընտրի նա իր կյանքում, շատ բանով կախված է մեր հասարակության ինչպես արտադրական և հասարակական, այնպես էլ հոգևոր ու բարոյական հիմքերի ստեղծումը։

Միայն նպատակասլաց, աշխատանքային և հայրենասիրական պարտքի բարձր գիտակցություն ունեցող մարդիկ, որոնք կարողանում են իրենց վարքագիծը կառուցել կոմունիստական ճիշտ հիմքերի վրա, միայն այդպիսի մարդիկ են ընդունակ կոմունիզմի կառուցման համաշխարհային-պատմական սխրագործությունը կատարելու։ Միաժամանակ հասարակության հսկայական վերակառուցման պրոցեսում միայն նրանք կկարողանան վերջնականապես

---

[1] *Տե՛ս «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը», Երևան, 1961, էջ 145։*

մաքրվել անցյալի ողջ կեղտից, մարդու արժանապատվությունը վիրավորող սովորույթներից և բարքերից, տրամադրություններից ու մտքերից։

Կոմունիզմի մարդկանց հոգևոր-բարոյական դիմանկարի ձևավորման այս երկու կողմերը անխզելիորեն կապված են միմյանց հետ։ Հասարակության արմատական վերափոխման պրոցեսում, աշխատանքի պրոցեսում մարդիկ փոխում են նաև իրենց գոյության պայմանները, այն աշխարհը, ուր նրանք ապրում են և հենց իրենց բարոյական դիմանկարը։ Այդ նույն պրոցեսում էլ կոմունիստական բարոյականությունն ինքը միս ու արյուն է ստանում և զարգացնելով իր սկզբունքը՝ նոր բովանդակություն ձեռք բերում։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում կոմունիստական դաստիարակության հարցերին հատուկ ուշադրություն դարձնելը բացատրվում է նաև կոմունիստական հասարակության բարձրագույն փուլի որակական նոր գծերով։

Կոմունիզմը բնութագրվում է ողջ հասարակության կյանքում հասարակական, մասնավորապես բարոյական գործոնի աճով։ Արդեն իսկ սոցիալիզմի մի շարք երևույթներ վկայում են, որ փոխվել է հարաբերակցությունը բարոյականության և իրավունքի միջև, հասարակության անդամների փոխհարաբերությունների գերատեսչական և հասարակական կարգավորման միջև (ընկերական դատարանները, պետական մի շարք ֆունկցիաները հասարակական կազմակերպություններին հանձնելը և այլն)։

Զարգացած կոմունիստական հասարակության մեջ այս տենդենցներն իրենց լրիվ իրականացումն են գտնում սոցիալիստական պետականությունը կոմունիստական ինքնավարության վերակազմվելու կապակցությամբ։ Նման հեռանկարի լույսի տակ աշխատավորության լայն խավերի գիտակցական կարգապահության նոր աստիճանը, բնականաբար, ժամանակի ամենահրատապ պահանջն է դառնում։ Կոմունիզմի հաստատման ժամանակաշրջանում գիտակցության վերակառուցումը կլինի ոչ միայն համակողմանի, այլև համապարփակ, կընդգրկի ողջ հասարակությունը, ուստի մարդկային համակեցության հիմնական կանոնների պահպանման անհրաժեշտությունը հասարակության յուրաքանչյուր անդամի համար սովորույթ կդառնա։

Այս բոլոր հանգամանքների բերումով էր, որ հասարակության բարոյական դաստիարակության հարցերի քննարկումը այնքա՜ն կարևոր տեղ գրավեց ՍՄԿՊ 22-րդ համագումարում և հանգեցրեց կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի մշակմանն ու ընդունմանը։

* * *

Կոմունիստական բարոյականության հիմնական սկզբունքները, որ մշակվել են շահագործման ու հարստահարության դեմ բանվոր դասակարգի մղած պայքարում, արտահայտում են դարեր անընդհատ ճշմարիտ և արդար կյանքի ձգտող աշխատավոր ժողովրդի ձգտումներն ու երազանքները։ Դուրս գալով դասակարգայնության շրջանակներից, կոմունիստական բարոյականությունը իր օբյեկտիվ նշանակությամբ դառնում է համամարդկային բարոյականություն։

Սակայն ժողովրդի այդ դարավոր երազանքը չէր կարող իրականություն դառնալ, քանի դեռ չէին փշրվել բռնության և շահագործման շղթաները, քանի դեռ ռևոլյուցիայի բովում չէր ստեղծվել սոցիալական արդարության վրա հիմ-

նրված հասարակությունը։ Սոցիալիզմի կառուցումը մեր երկրում մարդկության պատմության մեջ առաջին անգամ պայմաններ ստեղծեց մարդկային այնպիսի հասարակություն ստեղծելու համար, ուր իշխում են պատմությանը հայտնի բոլոր բարոյական սկզբունքներից ամենաճշմարիտ և ամենամարդկային սկզբունքները։ Այն ամենը, ինչ ծառայում է նման հասարակության կառուցման համար մղվող պայքարին, համապատասխանում է կոմունիստական բարոյականության սկզբունքներին։ «Կոմունիստական բարոյականության հիմքն է կազմում,—գրում է Վ. Ի. Լենինը,—կոմունիզմն ամրապնդելու և ավարտելու պայքարը»։

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը, որը շարադրված է ՍՄԿՊ 22-րդ համագումարում ընդունված Ծրագրում, ելնում է Վ. Ի. Լենինի այս հիմնական դրույթից։

Բուրժուական գաղափարախոսությունը բազմաթիվ տասնամյակներ փորձում էր հիմնավորել բարոյականության նկատմամբ մարքսիզմի իր նիհիլիստական մոտեցման իր թեզը։ Անհատի «ճնշում», անձնական պահանջմունքների սահմանափակում և հավասարում, «օբյեկտիվ արժեքների» ժխտում, «կանանց ընդհանրություն» և նման այլ առասպելներ՝ ահա՛ այն լուտանքների ամենևին ոչ լրիվ ցանկը, որ բուրժուական գաղափարախոսները թափել են մարքսիստական բարոյագիտության գլխին։ Իսկ բուրժուական հասարակության բարոյական պրակտիկան, որը հենց իր էությամբ հակամարդկային է, քիչ է մտահոգում բուրժուական էթիկային։ Բուրժուական գաղափարախոսներին թվում է, թե այն արդարացնելու համար բավական է վկայակոչել բարոյական նորմաների ոչլյատիվությունը, հարաբերականությունը, որը վերջին հաշվով արդարացնում է անձի բարոյական ամեն մի անկում։ Եվ անկախ այն բանից, թե բուրժուազիան անկեղծորեն է քարոզում «մարդը մարդուն գայլ է» սկզբունքը, թե՞ իր վարքագիծը քողարկում է կրոնական պատվիրանների ծածկույթով, բոլոր դեպքերում էլ բուրժուական հասարակության «բարոյական կոդեքսը» ներթափանցված է ցինիզմով և դաժանությամբ։ Նման «բարոյականությունն» ու նման բարոյական պատվիրանները մարքսիստներն իսկապես ժխտում են, քանի որ ինքը «բարոյական» հասկացությունն իր էությամբ չի աղերսվում այն բանի հետ, ինչին կոչված են այդ պատվիրանները, նորմաները ու սկզբունքները։

Կոմունիստները ընդունում են օբյեկտիվորեն ճշմարիտ բարոյականությունը, որը համապատասխանում է ժամանակակից մարդու բնությանը և այն խնդիրներին, որոնք նա կոչված է իրագործելու հոդուտ ողջ հասարակության։

Պետք է նշել, որ մարքսիզմին խորթ են նաև բուրժուական էթիկային բնորոշ դոգմատիզմը, վերացականությունն ու ֆորմալիզմը։

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը մշակվել է մարդկանց վարքագծի գնահատման հարցում կոնկրետ պատմական, դիալեկտիկական մոտեցման հիման վրա, որը բնորոշ է մարքսիզմին։ Եվ դրա համար էլ կոդեքսը նեղ, միակողմանիորեն կոնկրետ բնույթ ունեցող վարքագծի կանոնների հավաքածու չէ։ Կոմունիստական բարոյականության կոդեքսի մեջ շարադրված են այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվեն կոմունիզմ կառուցողներն իրենց վարքագծում և որոնց հիման վրա պետք է գնահատվի նրանց

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 359։

վարքագիծը, նկատի առնելով մարդուն շրջապատող պայմանները, ինչպես և նրա կոնկրետ արարքի բնույթը և ողջ բնավորությունը։

Մեր հասարակության յուրաքանչյուր անդամի գործունեության մեջ բարոյականության հիմնական սկզբունքը նվիրվածությունն է կոմունիզմին։ Այդ սկզբունքի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ դա կամայականորեն առաջադրված պահանջ չէ, ուստի և դառնում է ոչ միայն տեսակետորեն շատ կարևոր, այլև գործնականորեն նշանակալի։ Կոմունիստական ողջ աշխարհայացքը և, մասնավորապես, կոմունիստական բարոյականությունը, կառուցված է մարքսիզմ-լենինիզմի խիստ գիտական հիմքի վրա։ Կոմունիստական բարոյականության մեծ առավելությունը մյուսների նկատմամբ այն է, որ նա հասարակական առաջընթացի օբյեկտիվ անհրաժեշտության արտացոլումն է, նրա արտահայտիչը։ Խոսքը հասարակական այնպիսի իրավակարգին նվիրված լինելու մասին է, որը անհրաժեշտ է ոչ միայն մարդկային հասարակության նյութական հիմքերի զարգացման համար, այլև, դրա հետ միաժամանակ, իրենով մարմնավորում է բարձրագույն սոցիալական արդարությունը և համապատասխանում է յուրաքանչյուր աշխատավորի իսկական շահերին։ Նման գիտականությունը մղում է գործունեության և միաժամանակ ապահովում է այդ գործունեության արդյունքների համապատասխանությունը այն նպատակին, որ իր առջև դրել է հասարակությունը։ Այդ պատճառով էլ կոմունիզմ կառուցողի վարքագծի բարոյականության չափանիշը **կոմունիստական գաղափարների օրգանական դուգակցումն է կոմունիստական գործերին, աշխարհայացքի և պրակտիկայի, սկզբունքների և գործունեության լիակատար համապատասխանությունը։**

Մարքսիզմի բարոյագիտության մեջ բացառիկ կարևոր դեր է կատարում նաև դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքը։ Մարդն առանց գոյության միջոցների ապրել չի կարող։ Սա հանրահայտ և անվիճելի ճշմարտություն է։ Բայց այդ միջոցները նա կարող է տարբեր ճանապարհներով ձեռք բերել կամ ստանալ։ Այն, թե մարդն ինչպես է ստանում կամ ձեռք բերում իր գոյության համար անհրաժեշտ միջոցները (աղնիվ աշխատանքո՞վ, թե՞ ուրիշների աշխատանքի հաշվին՝ շահագործմամբ, գողությամբ, թալանով և այլն), որոշակի նշանակություն ունի մարդու բարոյական դիմանկարը բնորոշելու, նրա վարքագիծը գնահատելու համար։ Իսկապես, դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքը շատ բանով որոշում է այն սահմանը, որը մասնավորսեփականատիրական հասարակարգի պայմաններում բաժանել և բաժանում է աղնիվ աշխատավորների բարոյականությունը ուրիշների հաշվին ապրող մարդկանց բարոյականությունից։ Սակայն այդ բոլորը չէ։ Այս հարցում բարոյականությունը բնութագրող կարևոր հանգամանք էր և այն, թե աշխատանքը իրեն՝ աշխատավորի համար ապրուստի միջո՞ց է, թե՞ ուրիշների հարստացմանն է ծառայում, մարդկային համերաշխության աղբյո՞ւր է, թե՞ ընդհակառակը՝ պառակտման միջոց, ներքին անհրաժեշտությո՞ւն է, թե՞ ծանր, ստրկական պարհակ։ Դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքը կապիտալիստական հասարակության մեջ լի է բազմաթիվ հակասություններով։ Այդ հասարակության մեջ միլիոնավոր աշխատավորների աշխատանքը (հազիվ ապահովելով նրանց գոյությունը) ծառայում է նրանց իսկ շահագործողների հարստացմանը և, բնականաբար, չի կարող իսկական հոգեկան բավարարության աղբյուր դառնալ։

Կոմունիստական հասարակությունը իր զարգացման առաջին փուլում արդեն աշխատանքի մարդուն ազատում է այդ անհաշտ հակասություններից և ճնշող բարոյականությունից։

Սոցիալիզմի ժամանակ աշխատանքը դադարում է աշխատավորության կողմից սոսկ որպես իր և իր ընտանիքի գոյության միջոց, առավել ևս, հարստանալու միջոց համարվելուց։ Յուրաքանչյուրի աշխատանքը բոլորի բարեկեցության նախապայմանն է, իսկ բոլորի բարեկեցության նկատմամբ եղած հոգատարությունն է, որ ներդաշնակորեն կազմակերպված հասարակության մեջ դառնում է յուրաքանչյուրի բարեկեցության գրավականը։ Անձնական և հասարակական շահերի ներդաշնակությունը նոր սոցիալիստական հասարակական հարաբերությունների բնորոշ առանձնահատկությունն է։ «Ոչ միայն էկոնոմիկան և քաղաքականությունը,—ասել է Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ 22-րդ համագումարում,—այլև մարդկանց կենցաղը, կուլտուրան, հոգեբանությունը, գիտակցությունը ծառայում են որպես նոր հարաբերությունների ակտիվ ձևավորման ոլորտ։ Միայն սոցիալիստական հասարակարգում մարդկանց նոր հարաբերությունների հիման վրա հնարավոր է անհատի իսկական ազատությունը և բազմակողմանի ծաղկումը, անձնական շահերի ու ամբողջ հասարակության շահերի ներդաշնակ զուգորդումը»[3]։

Սոցիալիզմի ժամանակ անձնական և հասարակական շահերի ներդաշնակ զուգորդման համար կարևոր նախապայման է բուն իսկ «հասարակական շահ» հասկացության առանձնահատուկ բնույթը։

Դասակարգային հակամարտության վերացումը, բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի բարոյական միասնությունը, դասակարգերի միջև եղած բոլոր սահմանների վերացումը, որը տանում է դեպի սոցիալական մեծ միատարրությունը, սոցիալիստական հասարակության կյանքից բացառում են դասակարգային շահերի հակամարտությունը։ Սոցիալիզմի ժամանակ հասարակական շահը իսկապես ողջ հասարակության, ողջ ժողովրդի, մեր հասարակության բոլոր սոցիալական խմբերի շահն է։

Հասարակական շահերը, յուրաքանչյուր գիտակից անհատի շահերին համապատասխանելով, այնուամենայնիվ, չեն սպառում դրանք։ Սակայն սոցիալիզմի ժամանակ անձնական շահերը հասարակականին չեն հակասում։ Դեռ ավելին, անձնականի նկատմամբ հասարակական շահերի գերակշռությունը ոչ մի ընդհանուր բան չունի անձնական շահերի ոտնահարման հետ։

Սոցիալիստական հասարակությունը, սոցիալիստական պետությունն իր խնդիրը տեսնում է մարդկանց անձնական պահանջմունքների ամենից ավելի ճիշտ և լրիվ բավարարման մեջ։ Հասարակությունը, անցնելով դեպի կոմունիզմ, ավելի ու ավելի մեծ չափերով է ստանձնում մարդկանց անձնական պահանջմունքների բավարարման կազմակերպումը՝ ողջ հասարակության մասշտաբով։ Խոսքը հասարակական սննդի, կուլտուր-կենցաղային սպասարկման, մանուկներին մանկամսուրներում, մանկապարտեզներում, գիշերօթիկներում դաստիարակելու մասին է։ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի» սկզբունքի ճիշտ կիրառման նկատմամբ

3 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվեհաղորդումը պարտիայի 22-րդ համագումարին։

ուշադիր վերաբերմունքը, աշխատավորների նյութական շահագրգռվածության բարձրացումը, աշխատավարձի կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքը, հարկերի վերացումը, աշխատանքային օրվա հետևողական կրճատումը և այլն՝ այս բոլորն ասում են այն մասին, որ Սովետական կառավարությունն ու Կոմունիստական պարտիան ամեն բան անում են, որպեսզի հնարավորին չափ լրիվ բավարարեն սովետական մարդկանց անձնական պահանջմունքները։ Եվ քանի որ հասարակությունը հոգում է յուրաքանչյուրի մասին, ապա ամեն մեկի բարոյական պարտքն է՝ պաշտպանել բոլորի շահերը։ Սովետական հասարակության անդամի հոգատարությունը հասարակական ունեցվածքի պահպանման և ավելացման նկատմամբ, հասարակական պարտքի բարձր գիտակցությունը, անհանդուրժողականությունը հասարակական շահերը ոտնահարողների նկատմամբ՝ կոմունիզմ կառուցողի բարոյական կարևոր սկզբունքներն են։

Անձնական և հասարակական շահերի ներդաշնակ զուգորդումը հիմնովին ձերբազատեց աշխատանքի մարդուն, լայն հնարավորություններ բացեց աշխատելու նրա բնական ձգտման համար։ Նոր, կոմունիստական հասարակության մարդու համար աշխատանքը ծանր, ճնշող լծից դառնում է այն, ինչ պիտի լինի ազատ մարդու համար՝ առաջին կենսական անհրաժեշտություն։

Հօգուտ հասարակության և հօգուտ կոմունիզմի աշխատելը նույն բանն է։ Այն պատկերացումը, թե կոմունիզմը անբանների և անգործների հասարակություն է, իրականության հետ ոչ մի ընդհանուր բան չունի։ Արտադրողական ուժերի ժամանակակից զարգացման, ավտոմատացման և կոմպլեքսային մեքենայացման մասին արվող վկայակոչումները երբեք չեն հաստատում այդ կեղծ կարծիքը։ Իհարկե, կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը թեթևացնում են մարդկանց աշխատանքը։ Ձեռքի ծանր աշխատանքը վերացնելու խնդիրը մեր հասարակության ստեղծած առաջնակարգ հարցերից է։ Բայց, նախ, մարդիկ միշտ պետք է աշխատեն, գործի դնելով ավտոմատները, և, երկրորդ, տեխնիկայի նման հզոր զարգացման հասնելու համար կոմունիզմ կառուցողները պետք է անընդհատ աշխատեն և վերջապես, երրորդ, կասկածից վեր է, որ հանրօգուտ աշխատանքը, տեխնիկայի զարգացմամբ փոխելով իր ձևերը, չի դադարում մարդկային հասարակության գոյության կարևորագույն պայմանը լինելուց։ Վերջին հաշվով, միայն մարդու աշխատանքը կլուծի այն հսկայական խնդիրները, որ կծառանան կոմունիստական հասարակության առջև։ Այդ պատճառով էլ սխալ է որոշ երիտասարդների այն պատկերացումը, թե ապագա հասարակության մեջ ունիվերսալ ավտոմատների «կոճակների սեղմումը» կփոխարինի հանրօգուտ աշխատանքին։ Այդ մոլորությունը ծանր հարված է հասցնում ոչ միայն կոմունիստական դաստիարակությանը, այլև կոմունիզմի կառուցման ողջ գործին։ «Աշխատանքային գործունեության համար մարդու նախապատրաստումը, մարդկանց աշխատանքային կոփվածությունը, աշխատանքի՝ որպես առաջին կենսական պահանջմունքի նկատմամբ սեր ու հարգանք դաստիարակելը՝ ահա՛ հենց այդ էլ կազմում է կոմունիստական դաստիարակության ամբողջ աշխատանքի էությունը, միջուկը»[4]։

---

[4] Ս. Ա. Խրուշչով, ԱՄԿՊ Կենտկոմի հաշվետվությունը պարտիայի 22-րդ համագումարին։

Հասարակության օգտին բարեխղճությամբ աշխատելը, «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը կոմունիստական բարոյականության կոդեքսի կարևորագույն, բնորոշ կողմերից մեկն է։

Մեր հասարակության մեջ հանրօգուտ աշխատանքից խուսափող մարդը այլանդակ անախրոնիզմ է։ Բայց պակաս զզվելի չէ այն մարդը, որի համար աշխատանքը սոսկ ինքնահարստացման միջոց է և որը, բնականաբար, չի ամաչում հասարակությունից կորզել, խաբել, կողոպտել, վնասել իր աշխատակից եղբորը, իր կոլեկտիվի ընկերոջը։ Կապիտալիզմի «յուրաքանչյուրն իր համար, իսկ բոլորի համար՝ միայն աստված» գաղանային, լկտի օրենքին սոցիալիզմը հակադրում է կոլեկտիվիզմի՝ իր էությամբ կոմունիստական «յուրաքանչյուրը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար» սկզբունքը։

Կոլեկտիվիզմի և ընկերական փոխօգնության սկզբունքը, որը ընկած է կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի հիմքում, դրսևորվում է կյանքի ամենատարբեր բնագավառներում։ Երբ Վալենտինա Գագանովան, անտեսելով նյութական առավելությունները, առաջավոր բրիգադից հեռացավ միայն նրա համար, որ օղնի ընկերներին հասնելու ոգջ ձեռնարկության ընդհանուր մակարդակին, նա ղեկավարվում էր կոլեկտիվիզմի մեծ սկզբունքով։ Երբ Խաղաղ օվկիանոսի անծայրածիր տարածություններում մոլորված լաստանավի փոքրիկ կոլեկտիվի անդամները միմյանց նկատմամբ ամենօրյա հոգատարություն էին ցուցաբերում, այդ ևս նշանակում է, որ բոլորը հոգում էին մեկի և մեկը՝ բոլորի համար։ Կոմունիզմ կառուցողն այս սկզբունքով պետք է ղեկավարվի ամեն մի կոլեկտիվում՝ մեծ թե փոքր, արտադրական թե ընտանեկան, ազգային թե ինտերնացիոնալ, որովհետև դա մարդկային համակեցության հիմնական, տարրական սկզբունքներից մեկն է։

Սոցիալիստական հասարակության մարդը ենթակա չէ այն աննկանելի մենությանը, որին դատապարտված է կապիտալիստական աշխարհի մարդը։

Արթուր Միլլերի կովբոյներն ու կոմիվոյաժորները անապատատան թափառում են ամերիկյան պրերիաներում և քաղաքներում իրենց վշտերի հետ ներանձնացած, անիմաստ, պատահական դիպվածով կործանվում են Հեմինգուեյի հերոսները, մարդկային եղբայրության անձկալի կարոտով են լցված Վ. Սարոյանի հերոսները։

Այդ աշխարհում մարդը միայնակ է. այս եղբակացության է գալիս ամեն ոք, ում անծանոթ է եղբայրական համերաշխության զգացմունքը։ Մինչդեռ կոլեկտիվիզմի, ընկերական փոխօգնության զգացմունքը, մտնելով սոցիալիստական հասարակության մարդու ամենօրյա կենցաղի մեջ, անփոխարինելի դեր է կատարում նրա կյանքում, մտերիմների հետ կիսած ուրախությունը կրկնակի ուրախություն է, վիշտը՝ կես-վիշտ։

Կոլեկտիվիզմը մարդկային մեծ ընտանիքում մերձավորի, եղբայրակցի նկատմամբ տածած սիրո ցայտուն դրսևորումն է։ Մարդը մարդուն բարեկամ է, ընկեր, եղբայր. ՍՄԿՊ Ծրագրի հռչակած այս բարոյական սկզբունքը արտահայտում է մարդկանց այն մարդասիրական հարաբերություններն ու փոխադարձ հարգանքը, որոնք դառնում են սոցիալիստական հասարակության կյանքի չափանիշը։

Նոր մարդը, կոմունիզմ կառուցողը սոցիալիստական հասարակության ամենամեծ արժեքն է։ «Ամեն ինչ մարդու համար, ամեն ինչ հանուն մարդու». իրենց գործունեության մեջ հենց այս լոզունգով են ղեկավարվում Կոմունիս-

տական պարտիան և Սովետական կառավարությունը։ Մարդու համար կառուցվում են հզոր էլեկտրակայաններ և բարձր տեխնիկայով հագեցված ձեռնարկություններ, բնակելի տներ ու հիվանդանոցներ, դպրոցներ ու մանկամսուրներ, մարդու կարիքների համար են օգտագործվում ճեղքված ատոմի էներգիան և պոլիմերների քիմիան, յուրացվում են խոպանի հսկայական տարածությունները, մարդուն են ծառայում սոցիալիստական հասարակության կուլտուրան, գրականությունը, արվեստը։ Վերջապես, հանուն մարդու, հանուն նրա ապագայի է մղվում մեր ժամանակի ամենահումանիստական պայքարը խաղաղության, միջազգային լարվածության թուլացման համար, որպեսզի մարդկությունը մեկընդմիշտ ազատվի պատերազմի ահ ու սարսափից։

Կոմունիստական հասարակությունը նպատակ է դրել բոլոր պայմաններն ստեղծել մարդկության և մարդկային անհատի լրիվ ծաղկման համար։ Հավասարության և իսկական ազատության սկզբունքների հաղթանակը մարդկանց ընդմիշտ կազատի այն բոլոր նախադրյալներից, որոնք ծնում են եսասիրություն և մարդատյացություն, գզվռտուք և թշնամանք, ստորացուցիչ պայքար «արևի տակ տեղ» գրավելու համար։ Կոմունիզմը վեհացնում է մարդուն, և այդ պակաս կարևոր չէ, քան այն բոլոր նյութական և հոգևոր արժեքները, որ հասարակությունն է ստեղծում։ «Մերձավորների» և «հեռավորների» նկատմամբ ունեցած հոգատարության, միմյանց նկատմամբ եղած ուշադրության և օգնության մեջ կա իսկական հումանիզմ, որը բնորոշ է նոր կոմունիստական աշխարհի բարոյականությանը։

Համագործակցությամբ և փոխօգնությամբ են ներթափանցված նաև Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքի ազգերի փոխհարաբերությունները։

Դեռևս Ֆ. Էնգելսը հիշեցնում էր, որ ուրիշ ժողովուրդներին հարստահարող ժողովուրդն ազատ լինել չի կարող։ Կարելի է սրան ավելացնել, որ յուրաքանչյուր ազգի կողմից իր նկատմամբ տածած իսկական հարգանքի զգացմունքը ևս անիմաստ է, եթե նա չի հարգում մյուս ազգերի արժանիքները, եթե նա արդարացի կերպով չի գնահատում այն ամենը, ինչ ամեն մի ազգ անում է մարդկության նյութական և հոգևոր առաջադիմության համար։ Ազգերի միավորման, նրանց կուլտուրաների փոխհարստացման տենդենցը վկայում է, որ գալիք միասնական համաշխարհային կուլտուրան մի որևէ արտոնյալ ազգի կողմից չի ստեղծվելու, այլ լինելու է այն ամենի սինթեզը, ինչ ստեղծվել է բոլոր ժողովուրդների և նրանց ներկայացուցիչների կողմից բոլոր ժամանակներում։

Սոցիալիստական հասարակության մեջ արդեն տեղի է ունենում իրավահավասար ազգերի մերձեցման այդ պրոցեսը, ազգեր, որոնց կյանքը կառուցվում է միասնական սոցիալիստական հիմքի վրա։ Սոցիալիստական հարաբերությունների նոր տիպի հաղթանակը մեզ մոտ հասցրեց այն բանին, որ տարբեր ազգությունների սովետական մարդկանց մոտ ստեղծվել են հոգեկան խառնվածքի ընդհանուր գծեր, որոնք մարմնավորում են ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների լավագույն տրադիցիաները։ ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը և դրանից բխող անհանդուրժողականությունը դեպի ազգային սնապարծությունն ու ազգային կամ ռասայական ատելությունը՝ այդ նոր հոգեկան խառնվածքի բնորոշ գիծն են։

Սոցիալիստական ազգերի միավորման բարդ պրոցեսն ընթանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական հայրենասիրության (ընդհանրապես սոցիալիստական գաղափարախոսության և մասնավորապես կոմունիստական բարոյականության այդ անսասան հիմքերի) դրոշի ներքո։ Այդ նույն գաղափարական հիմքի վրա ոչ միայն ամրապնդվում, այլև ընդլայնվում են ազգային եղբայրության կապերը սոցիալիզմի համաշխարհային ողջ սիստեմում։ Սոցիալիստական հայրենասիրությունը իր մեջ մարմնավորում է նվիրվածությունն ու հավատարմությունը ինչպես հայրենիքին, այնպես էլ բոլոր սոցիալիստական երկրների միջև եղած բարեկամությանը և օրդանապես ներառնում է համերաշխությունն ամբողջ աշխարհի ժողովուրդների հետ։

Կոմունիստական բարոյականության սկզբունքը եղբայրական համերաշխությունն է բոլոր երկրների աշխատավորության, բոլոր ժողովուրդների հետ։

Կոմունիստական բարոյականությունը, որ ներթափանցված է հումանիզմի, կոլեկտիվիզմի, խաղաղության և բոլոր ժողովուրդների եղբայրության բարձր սկզբունքներով, իր բուն էությամբ գործուն է և ակտիվ։ Կոմունիստները հեռու են ամեն ինչ ներելու, շարին չդիմադրելու կամ հաշտվողականություն քարոզներից, որովհետև սոցիալիզմի պատմության ողջ փորձը ապացուցում է, որ կոմունիզմի մեծ սկզբունքները կարելի է պաշտպանել կապիտալիստական աշխարհի և նրա ռեակցիոն գաղափարախոսության դեմ մղվող անհաշտ պայքարում։ Միայն նման պայքարի միջոցով կարելի է մարդկանց համար խաղաղություն, ազատություն և երջանկություն նվաճել։ Կոմունիստական բարոյականության այս ռեոլյուցիոնությունն ու մարտակամությունն իրենց արտահայտությունն են գտել կոմունիզմի թշնամիների, խաղաղության գործի և բոլոր մարդկանց ազատության թշնամիների նկատմամբ ցուցաբերվող անհանդուրժողականության մեջ։

Կոմունիստական հասարակության մեջ կարևոր նշանակություն են ձեռք բերում մարդու անձնական հատկությունները, նրա բնավորության գծերը։ Եվ, բնականաբար, դա նույնպես իր արտացոլումն է գտել կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի մեջ։

Մարդկային հարաբերությունները բարդ են ու բազմակողմանի և այն, թե ինչպես են դրանք ձևավորվում, շատ բանով կախված է մարդկային բնավորության գծերից։ Անաղնիվ, կոպիտ և այլանդակ սոցիալիստը, առավել ևս կոմունիստը, հասարակության կյանքում չպետք է տեղ ունենա։ Սոցիալիստական հասարակության մեջ պակաս անհանդուրժողականություն չեն ցուցաբերում դեպի անցյալի այնպիսի մնացուկները, ինչպիսիք են անբանությունը, զոփոդականությունը, կարիերիզմը, որոնց դեմ առանձնապես եռանդուն պայքարի կոչ էր անում Վ. Ի. Լենինը։ Դեռևս սոցիալիզմի կառուցման արշալույսին, դրանք գնահատելով որպես կապիտալիստական հասարակության ծանր ժառանգություն, Վ. Ի. Լենինը ասում էր. «Հարուստներն ու խարեբաները միևնույն մեդալի երկու կողմերն են, դրանք մակարույծների երկու գլխավոր կատեգորիաներն են, որոնց սնել է կապիտալիզմը, դրանք սոցիալիզմի գլխավոր թշնամիներն են, այդ թշնամիներին պետք է ամբողջ բնակչության հատուկ հսկողության տակ առնել, նրանց հետ պետք է անհնա դատաստան տեսնել, հենց որ նրանք ամենափոքր չափով խախտեն սոցիալիստական հասարակության կանոններն ու օրենքները։ Այդ տեսակետից, ամեն

մի թուլություն, ամեն մի վարանում, ամեն մի սենտիմենտալ վերաբերմունք մեծագույն ոճրագործություն կլիներ սոցիալիզմի հանդեպ»[5]։

Այն պահից, երբ Լենինը գրել է այս տողերը, շատ ժամանակ է անցել, և կյանքում շատ բան է փոխվել։ Մեր երկրում այլևս շահագործողներ չկան, մի կտոր հացի համար ամեն գնով պայքարելու սոցիալական ոչ մի հող չկա։ Սակայն այն արատները, որոնց մասին խոսում էր Լենինը, դեռևս մեր հասարակության կյանքից լիովին չեն վերացվել։ Նրանց դեմ պայքարի կոչ է անում իսկական մարդասիրությունը, որը հատուկ է կոմունիստական բարոյականության բոլոր սկզբունքներին։

Բարոյականության կոմունիստական կոդեքսում հատուկ տեղ է հատկացված ժամանակակից սոցիալիստական հասարակության ընտանեկան հարաբերություններին։ Եվ դա հասկանալի է, քանի որ սոցիալիստական հասարակության մեջ հասարակական կյանքը անձնական և ընտանեկան կյանքից սահմանազատված չէ և չի կարող սահմանազատված լինել։ Դժվար է պատկերացնել ազնիվ ու ճշմարտասեր մարդու, որը անկեղծորեն հոգ է տանում հասարակության բարօրության մասին, բայց ընտանեկան հարաբերություններում սուտ, կեղծիք, անտարբերություն է ցուցաբերում։ Ազնվությունն ու շիտակությունը, բարոյական մաքրությունը, պարզությունն ու համեստությունը, որ բնորոշ են կոմունիզմ կառուցողի բարոյական դիմանկարին, պետք է հավասարապես դրսևորվեն ինչպես հասարակական, այնպես էլ անձնական կյանքում։

Սոցիալիստական հասարակության մեջ ընտանեկան փոխհարաբերություններին նույնպիսի կարևոր նշանակություն է տրվում, ինչպես և կոմունիզմի օրոք, երբ ընտանիքի վրա են դրվում կարևոր, այդ թվում և դաստիարակչական ֆունկցիաներ։ Կոմունիստական հասարակության մեջ հասարակական և ընտանեկան դաստիարակությունը միմյանց չեն հակասում, միմյանց չեն բացառում։ Ընդհակառակը, դրանք խելացիորեն զուգորդվում են՝ հոգևոր հոգեպես և ֆիզիկապես առողջ սերնդի դաստիարակության շահերի։ Կոմունիզմի օրոք ընտանիքի «անհետացման», նրա «վերացման» մասին խոսք անգամ լինել չի կարող։ Ընտանեկան հարաբերությունները միայն կոմունիզմի օրոք ձեռք կբերեն իրենց իսկական ու մարդկային հիմքը՝ ամուսինների սերն ու փոխադարձ հարգանքը։

* * *

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը, ուր շարադրված են կոմունիստական բարոյականության հիմնական սկզբունքները, որոնք վերաբերում են մարդկային հարաբերությունների տարբեր կողմերին, կոչված է սոցիալիստական հասարակության կյանքում կարևոր դեր կատարելու։

Այն մարդկանց ամենօրյա կյանքի բարոյական չափանիշն է, հատկապես երիտասարդության համար մի կամերտոն է, որի հետ սոցիալիստական հասարակության աշխատավորները կկարողանան ներդաշնակ դարձնել իրենց վարքագիծը։

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 500—501։

Սակայն ճիշտ չի լինի կարծել, թե կոմունիստական բարոյականության սկզբունքները բերանացի իմանալը կարող է ինքնին որևէ դրական արդյունք տալ։ Խնդիրն այն է, որ այդ սկզբունքները մարդկանց համար միս ու արյուն դառնան, նրանց հոգեբանության և գիտակցության, նրանց ամենօրյա կյանքի և աշխատանքի անբաժանելի բովանդակությունը կազմեն։ Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ է մեծ և բազմակողմանի դաստիարակչական աշխատանք տանել, ողջ հասարակության ակտիվությունը զուգորդելով յուրաքանչյուրի անկեղծ ցանկությանը՝ դառնալու կոմունիստական հասարակության արժանի բաղաքացին։

О НЕКОТОРЫХ ОСНОВНЫХ ПРИНЦИПАХ КОММУНИСТИЧЕСКОЙ НРАВСТВЕННОСТИ

М. С. ДАНИЕЛЯН

(Резюме)

Одной из важнейших задач, стоящих перед социалистическим обществом в период создания самого справедливого и человечного общественного строя, является воспитание строителей коммунизма. Осуществление этой задачи является одной из сторон триединого процесса, включающего также создание материально-технической базы коммунизма и торжество новых коммунистических общественных отношений.

Основные принципы коммунистической морали, выработанные в процессе борьбы рабочего класса, отражают стремления и чаяния трудового народа, на протяжении веков стремившегося к истинно справедливой жизни. Принятый XXII съездом КПСС кодекс коммунистической морали с возможной конкретностью формулирует эти принципы и, тем самым, полностью опровергает абсолютно необоснованный тезис буржуазной морали о нигилистическом якобы отношении коммунистов к морали. В противоположность буржуазной морали, лицемерной и эгоистичной, коммунисты утверждают объективно-истинную мораль, соответствующую природе современного человека и тем задачам, которые он призван осуществить в интересах всего общества. Все принципы коммунистической морали — преданность делу коммунизма и непримиримость к его врагам, гуманизм, коллективизм и братская солидарность народов, честность и правдивость в семье и обществе, активная ненависть к тунеядству, стяжательству и карьеризму и т. д. — выражают марксистско-ленинское, социалистическое решение вопроса о соотношении личного и общественного интереса.

Моральный кодекс строителя коммунизма, в котором изложены основные принципы коммунистической морали, призван сыграть исключительно важную роль в моральной жизни общества. Этот кодекс является нравственным ориентиром в повседневной жизни людей и, в особенности, молодежи.